ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 22.04.2019թ. ԹԻՎ 289-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

30 ապրիլի 2019թ.,
ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝
Ա. Գրիգորյան ՏԲ պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Գ. Սարգսյան ՏԲ ավագ-մեխանիկ վարորդ
Ա. Աղվանյան ՏԲ դիսպետչեր

Հանձնաժողովի բացող անդամ՝
Հ. Մխիթարյան ՏԲ մեխանիկ-վարորդ

Հանձնաժողովի քարտուղար
Գ. Սարգսյան ԻՊԳ մասնագետ

Օրակարգ՝

1. <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--10/19>> ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի բացում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց, որ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար մինչև 31.12.2019թ ֆինանսական նախատեսումն ընկերության կողմից հաստատված է որպես ֆինանսական միջոցների սահմանված շեմ և հրապարակեց սույն ընթացակարգի համար նախատեսված ֆինանսական միջոցների սահմանված շեմը՝ ոչ ավել քան 4 000 000 ՀՀ դրամ :

Այնուհետև հրապարակվեցին հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ <<Մ ԲԻ Ռ>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4, հեռ. 055558550) և մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է հրավերում ներկայացված բոլոր տրանսպորտային միջոցների վերանորոգման, դրանց ընթացքում փոխարինվող ապրանքների և դրանց սպասարկման համար (անհրաժեշտությամբ պայմանավորված). 120 210 000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի;

1. <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--10/19>> ծածկագրով՝ Ընկերության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մ ԲԻ Ռ >> ՍՊԸ-ին.

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-10/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը,

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--10/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.13 կետով նախատեսված փաստաթղթերը:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ--10/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.16 կետով նախատեսված վերջնաժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33, <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքում:

Ա. Գրիգորյան		Հանձնաժողովի նախագահ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Աղվանյան		Հանձնաժողովի անդամ
Հ. Մխիթարյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար